

71. ՄԵՆՏՐԱԲԱՆ ԱՐՇԱԿ — Երևակայիք, 1. Գարուն, Թիֆլիս, 1887: Տպ. Ռոտինեան, 2. Ամառ, Թիֆլիս, 1887: Գին՝ 50 կոպ.:

72. ՄԻՍՏՐՃԱՆՍ Ե. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. — Առձեռն Բառագիրք Հայերեն-Լատիներեն ի պէտս դպրոցաց: Հռուսթ, 1887: Տպ. Ս. Ժողովոյ Տարածման Հաւա-տոյ:

73. ՄԻՐԻՍՄԱՆԵԱՆ Մ. Մ. — Չբուսնք կամ Հաւաքածոյ գաղղերեն հատընտիր առական, Կոստ. Պո-լիս, 1887:

74. ՄԻՐԻՍՄԱՆԵԱՆ Բ. — Ժողովրդական գրա-գրան, — Գ. Տետր. Ս. Ատոմեանց, Ղեւոնդեանց եւ Վարդանանց զորավարների տոները, Էջմիածին, 1887: Գին՝ 5 կոպ.:

— Ե. Տետր. Հայաստանի առաջին Լուսաւո-րիչներ, Ս. Թադէոս եւ Բարթոլոմէոս, Թիֆլիս, 1887: Տպ. Վարդանեան, Գին՝ 5 կոպ.:

— Զ. Տետր. Ալֆօնս Դօդէի «Հայր եւ Որդի» եւ Հայ զինուոր, Թիֆլիս, 1887: Գին՝ 5 կոպ.:

[Քննչոյ. Մշակ, 1887, Թ. 50: Կր. Դոր, 1887, Թ. 77: Արար, Թ. 5. :]

75. ՄՇԱԿ, լրագիր քաղաքական, Ժ. Ե. Տարի, Թիֆլիս, 1887:

(Հարունակէլ):

ՄԻՆԱՍ ԹՈՒՍԵԹԵՑԻ

(ՆՈՐ ՁԵՐԱՅԻՐ)

Պ. Գերովլէ Պատկանեան Բեգերսպուրիի Համալսարանին գիտնական ուսուցիչը, 1884ին Նշեարժ մարտնչութեան Հայոց անուամբ հետա-քրքրական երկասիրութիւն մը հրատարակած է ի Բեգերսպուրի: Ասիկայ կը պարունակէ քանի մը գրութիւններ, որոնք մինչեւ նոյն ժամանակ տպագրութեամբ ի լոյս բնծայուած չէին: Ասոց մէջն է նաեւ Մինաս Թոսեթեցին, որ ըստ Պատ-կանեանի 150 տողով ողբերգական բանաստեղ-ծութեամբ մը կ'երգէ Ստեփան Վոյվոտային, 1551ին, Վալաքիայի Հայոց դէմ հանած ան-տանելի հալածանքը:

Ձեռք ուղեր բանակուել ըլլալ անոնց հետ, որոնք կը համարին թէ Հայերը՝ Վալաքիայի մէջ ամենեւին հալածանք կրած չեն. եւ ոչ ալ հաւ-ատք կ'ընծայենք մերազնեայց ոմանց, որք կը հա-մարին թէ Հայոց Մոլտաւիայէն ելելուն մի մի-այն պատճառն՝ այն անտանելի հալածանքներն եղած ըլլան:

Միջին ճամբան կը բռնենք:

Իրաց առաւել լուսաւորութեան համար կ'ուզենք երկրորդ անգամ հրատարակել Մինաս սարկաւազին ողբերգութիւնն, որ պատմական դէպք մըն է անշուշտ, զոր — եթէ կ'ուզենք — համարինք, որ չափազանց բանաստեղծութեամբ ու քիչ մըն ալ սրտի տոչորմամբ գրած ըլլայ. բայց, ինչպէս յայտնապէս կ'երեւայ, ժամանակա-կից եւ ակնատես (տես 107² տունը) պատմա-գիր մըն է, գոնէ առաջինկայ նիւթին նկատմամբ:

Պատկանեան, ինչպէս իւր մատենկան յա-ռաջարանին մէջ կ'ըսէ, գտած է զՄինաս Թոսեթեցին Բարիզի Ազգային մատենադարանին (Bibliothèque nationale) ձեռագրաց ժողովածոյին մէջ 224 թուին տակ. (Acc. F. 101.) «Հատ հետաքրքրական ոտանաւորի մը հանդիպեցայ, կ'ըսէ. բայց ափսոս, որ ամբողջ գործքը մնացած չէ. միայն երկրորդ մասը կայ: Ճակատն ու սկիզ-բը յայտնապէս պատահուած հանուած են: Մա-տենադարանին մեծ ցանկին մէջ առաջինկայ ձե-ռագրին վրայօք յաջորդ տեղեկութիւնը կայ.

Récits des persécutions religieuses qu'ont subies les Arméniens en Galicie de la part du voïvode Etienne, par Minas de Tokat, en langue vulgaire. (Պատմութիւն հալածանաց զոր կրեցին Կալիցիայի Հայերն Ստեփան Վոյվոտային ձեռքէն. աշխարհիկ լեզուով գրուած Թոսեթեցի Մինասէն):

Այս խօսքերը յայտնի կ'ընեն հրատարա-կութեան բովանդակութիւնը:»

Արդ մենք կրկին պատճառի համար ուզած ենք Մինաս Թոսեթեցւոյն այս գործքը վերստին հայ ուսումնասիրաց ծանօթացնել: Մէյ մ'որ Պատկանեանին հրատարակութիւնն — ինչպէս ինքն ալ կը վկայէ — պակասաւոր է: Եւ իրօք ալ իւր հրատարակութիւնը կը սկսի մեր ձեռքն եղած ձեռագրին 35 երրորդ տան երկրորդ՝ — կամ գործոյն 137 երրորդ — տողովը: Երկրորդ եւ գլխաւորաբար, որ շետկենք ու մեկնենք այն քանի մը տեղերն ուր գիտնական ուսուցչապետը չէ առ-ջեւն ունեցած ուղիղ ընթերցուածն¹: Ասկէ զատ՝ շատ բան՝ որ թերեւս Ռուսահայոց եւ ուրիշ-ներուն համար անիմանալի է, մենք կը հասկը-նանք. որովհետեւ մեր լեզուն նոյն գաւառականն է: Ողբերգութեան մէջ բազմաթիւ բառեր որ շատերուն անծանօթ են, Գրանսիլուանիոյ ու Լե-հասայոց մէջ հասարակ գործածուած բառեր են: — Բայց ուր որ այս կրկին պատճառներէն եւ ոչ մէկը կը զօրէ, այն ատեն կը մնայ երրորդ գրգիռ մը. այսինքն՝ տեսնել, քննել եւ համե-մատել Բարիզեան ու Գրանսիլուանիոյ Հայաքա-ղաքին օրինակաց մէջ եղած տարբերութիւններն:

Որպէս զի պայծառ գաղափար մ'ունեցուի սկզբնապատճառին վրայ, որուն համար Մինաս սարկաւազն իւր բանաստեղծական ողբը գրած է, հարկ կը համարինք Պատկանեանէն առնելով՝ համառօտ թարգմանութեամբ մը (ինք ուսուերէն

¹ Պատկանեան իւր հրատարակութեան առաջին տողը (էջ 53) կը կարգայ այսպէս. «Հատ քիմ օրին գտան ըրերն» եւ այլն. ուր պէտք էր կարգաւ ըստ մեր ձեռագ-րին «Հապք ի մորին՝ գտան ըրերն», որ իմաստ ունի: